Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ք. Երևան

<<18>> փետրվար 2022թ.

13.09.2021 թվականին N ՀՀ Ո ԷԱՃԱՇՁԲ-2021-ԱՎՎ/821/1-1 ծածկագրով, Էլեկտրոնային աճուրդ գնման ձևով ՀՀ քաղաքացու ոչ կենսաչափական անձնագրի բլանկների տպագրման աշխատանքների համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել <<Ինֆորմատիկ Սոլուշն>> ՍՊ ընկերությունը (այսուհետ ընկերություն), իսկ 2-րդ տեղ է զբաղեցրել է <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊ ընկերությունը: 12.10.2021 թվականին Ընկերության հետ N ՀՀ Ո ԷԱՃԱՇՁԲ-2021-ԱՎՎ/821/1-1 ծածկագրով կնքվել է պայմանագիրը: 20.10.2021 թվականին ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի 526-ն որոշման 50-րդ մասով <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊ ընկերությունը՝դիմել է ՀՀ ոստիկանություն պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու նպատակով, որը բավարարվել է:

24.12.2021 թվականին Ընկերությունը ներկայացրել է իր կողմից տպագրված անձնագրի բլանկների առաջին խմբաքանակը: <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ ներկայացված բլանկների պաշտպանիչ թաղանթը հոլոգրաֆիկ չէ: 29.12.2021 թվականին ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի ներկայացված անձնագրի բլանկները ամբողջությամբ համապատասխանում են N ՀՀ Ո ԷԱՃԱՇՁԲ-2021-ԱՎՎ/821/1-1 պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին, բացառությամբ երկու հատկանիշի: Պատվիրատուի կողմից Ընկերությանը տրվել է ողջամիտ ժամկետ անհամապատասխանությունները վերացնելու նպատակով: Ընկերությանը անհամաձայնություն է հայտնել փորձագետի եզրակացության վերաբերյալ և ներկայացրել համապատասխան հիմնավորումներ՝ պնդելով , որ նշված երկու հատկանիշներով նույնպես մատակարարված անձնագրի բլանկները համապատասխանում են տեխնիկական բնութագրին: Վերոնշյալ հիմնավորումները ներկայացվել են փորձագետներին, ստացվել է պատասխան, որ անձնագրի բլանկների պաշտպանիչ թաղանթի հոլոգրաֆիկ լինելու հետ կապված ընկերության ներկայացրած հիմնավորումները ընդունելի են, իսկ շապիկի (վերջնամաս) համարակալված լինելը նախատեսված է ICAO-ի ստանդարտներով և ընդհակառակը հանդիսանում է լրացուցիչ պաշտպանիչ միջոց:

Այսպիսով հաստատվել է մատակարարված բլանկների տեխնիկական բնութագրին համապատասխանելիությունը:

25.12.2021 թվականին ընկերությունը մատակարարել է անձնագրերի նոր խմբաքանակ, ընդունման գործընթացին կրկին մասնակցել են <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչները: <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչները երկրորդ անգամ ներկայացրել են նույն առարկությունը՝ պաշտպանիչ թաղանթի հոլոգրաֆիկ հատկանիշի մասով, որն արդեն իսկ չէր հաստատվել, ուստի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ՀՀ ոստիկանության ԱՎ
վարչության ԿՏ բաժնի պետ _____ Ս. Աբրահաման

ՀՀ ոստիկանության ԱՎ
վարչության պետ _____ Ա. Մկրտչյան